

Երբ ուսումնասիրում ենք մեր պատմությունը, հպարտանում ենք, որ Տիգրան Մեծի թագավորության ժամանակ մենք՝ հայերս, ունեցել են կայսրություն:

Մեզ թվում է, թե երբ որևէ հեռավոր անմարդաբնակ կղզում կամ սարի գագաթին ոտք ենք դնում, դա կարելի է գնահատել որպես նորություն աշխարհի պատմության մեջ: Եթե կան մարդիկ, որ այդպես են մտածում, նրանք չարաչար սխալվում են: Մոտավորապես 2,5 միլիոն տարվա գոյության ընթացքում մարդը ամեն ինչ հետազոտել է, ամեն տեղ եղել է հազարավոր անգամներ, և մենք՝ որպես ժամանակակից մարդ, պետք է իմանանք, որ մեր մտածելակերպը և թե վարվելակերպը, մի խոսքով, ինչ մեզ շրջապատում է, ուսումնասիրված է և քաջ հայտնի է մարդկությանը հազարավոր տարիներ ի վեր: Մենք ընթերցված գիրք ենք: Եվ այդ գերակշռող գրքերը մեզ չեն հասել պատերազմների և կրոնական հեղաշրջումների պատճառով: Այն ժողովուրդները, որոնք եղել են զարգացած և կարողացել են իրենց պատմական հիշողությունն ու առաքելությունը փոխանցել սերնդե-սերունդ, ունեցել են ավելի մեծ հնարավորություն ժամանակակից աշխարհում իրենց զգալի տեղը գրավելուն:

Մենք պատմության դասընթացներից գիտենք, որ երբ իսպանացիները ու պորտուգալացիները զավթում էին Ամերիկան, նրանք տեղաբնակներին կարողանում էին խաբել մի կտոր հայելի տալով՝ վերցնելով ոսկի կամ այլ թանկարժեք իր:

Դա ուղիղ կապ ունի այն բանի հետ, որ եթե պետությունը փակ է, մարդը չի շփվում ուրիշ պետության և մշակույթի հետ, նա դանդաղեցնում է իր զարգացումը և փորձի փոխանակումն ու առաջընթացը:

Որպեսզի ավելի լավ հասկանաք, պատկերացրեք, թե դուք ձեր ծնողների հետ գնում եք հանգստանալու, արդեն հասկանալի է, որ պետք է գնաք Վրաստան, քանի որ մոտիկ է և մատչելի: Եթե առաջին անգամ եք այցելում արտասահման, և ձեզ հիացնում են մաքուր փողոցները, երգիչները, կերակուրը, բարի մարդիկ, դուք ինչ- որ չափով դառնում եք այդ մշակույթի կրողը կամ փորձում եք այդ մշակույթը ինչ -որ չափով համադրել ձեր ունեցած արժեքների հետ: Դուք, վերցնելով ձեր հարևան պետությունից ինչ- որ դրական բան, դառնում եք ավելի մրցունակ ձեր մյուս հասակակիցների հետ համեմատած:

Դե հիմա պատկերացրեք, թե դուք հնարավորություն ունեք տարբեր նպատակներով այցելել Հարավային Ամերիկա և տեսնել՝ ինչպիսի

քաղաք է Մաչու Պիկչուն, մեծ Իգուասու կամ Անխել ջրվեժը: Երբ դու նպատակ կունենաս շարադրություն գրելու բնության գեղեցկության մասին կամ էլ ինչ անել, որպեսզի փոխես քո շրջապատը, դու, համեմատած մնացածի հետ, ունես հստակ պատկերացում բնության գեղեցկության, ժողովուրդների, աշխարհայացքի և այլ շատ բաների շուրջ:

Վերջերս գրուցում էի մի շվեյցարացի գրոսաշրջիկի հետ, և երբ խոսեցինք Հայաստանի և նրա անելիքների մասին, նա՝ որպես կողքից նայող մարդ, շատ ճիշտ նկատեց, որ եթե մենք այդքան աշխատասեր լինենք, ինչպես մեզ ներկայացնում ենք, աշխատելով մեր հողի վրա մեր երկիրը կդարձնենք Շվեյցարիա:

Իսկ եթե հայ գիտնականը հնարավորություն ունենա առնչվել Գերմանիայի գիտնականների ակադեմիայի հետ, իր դիմումի համաձայն չի ստանա աշխատավարձ, քանի որ այն ինչով զբաղվում է Հայաստանի գիտնականների ակադեմիան, գիտության հետ կապ չունի: Կառույցները պետք է միշտ կապված լինեն աշխարհի զարգացած երկրների հետ, որպեսզի զարգանան հասարակությունը, բժշկությունը, կրթական համակարգը, դատական համակարգը, բանակը:

Հարգելի՛ դպրոցականներ, դուք մեր կյանքի լույսն եք, ձգտեք դեպի առաջընթաց, դեպի Եվրոպա, մի՛ վախեցեք ազատվել դոգմաներից, փոխե՛ք ձեզ, փոխե՛ք ձեր շրջապատը, կյանքը, եղե՛ք միշտ պատրաստ թշնամուն հակահարված տալուն, ունեցե՛ք արժանապատվություն: Մենք ունենք այնպիսի բարեկամ պետություններ, ինչպիսիք են Ամերիկան, Ֆրանսիան, Ճապոնիան, Հնդկաստանը, Պարսկաստանը, Չինաստանը, Արաբական երկրները. ուսումնասիրե՛ք նրանց մշակույթը, վերցրե՛ք միայն լավը, եղե՛ք առաջադեմ: Վերադառնալով Տիգրան Մեծին՝ շատ քչերը գիտեն, որ նա իր գրաված երկրներից Հայաստան է տեղափոխել աշխատասեր, բանիմաց ցեղախմբեր՝ այդպիսով նոր կյանք տալով տարբեր մշակույթներից առաջացած նոր գաղափարների:

ՆԱՐԵԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ